«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«23» 06 2014թ.

Հաստատում եմ
Գնումների աջակցման կենտրոնի պետի ժ/պ
Հ. Թունյան

Ն ԳԲԽ 20/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 05.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ (այսուհետ՝ նաև Ընկերություն) հայտնել է, որ 23.04.2014թ. www.armeps.am կայքի միջոցով հրապարակվել է գնման գործընթացի՝ գնահատող հանձնաժողովի

2014թ. ապրիլի 23-ի որոշմամբ հաստատված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով հրավերը (ծանուցումը):

Ընկերությունը, ուսումնասիրելով տրամադրված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով հրավերը (ծանուցումը), ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, 25.04.2014թ. www.armeps.am կայքի միջոցով դիմել է նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով տալ պաշտոնական պարզաբանում ընթացակարգի հրավերի վերաբերյալ: Բազմաթիվ այլ հարցերից բացի, պարզաբանման հարցման մեջ հղումներ կատարելով արտադրողի՝ Sony Corporation (Ճապոնիա) ընկերության հյուսիս-ամերիկյան և եվրոպական պաշտոնական WEB կայքերում հրապարակված տեղեկատվությանը, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել է այն փաստին, որ հրավերով պահանջվող թվային պրոեկտորի ներկայացված տեխնիկական բնութագրերի մեծ մասը չի համապատասխանում SONY VPL-CX235 թվային պրոեկտորի բնութագրերին:

Ընկերության կողմից գնահատող հանձնաժողովին ներկայացվել է նշված անհամապատասխանությունների համեմատական աղյուսակը, որտեղ նաև արձանագրված է, որ SONY VPL-CX235 թվային պրոեկտորը կարող է արտացոլել միայն UXGA (1.600 x 1.200 pixels, ընդամենը 1.920.000 pixels) թույլտվության ազդանշան և ոչ թե պահանջվող Full HD (1.920 x 1,080 ընդամենը 2,304,000 pixels) 1080p. թույլտվության ազդանշան, ինչպես նաև SONY VPL-CX235 թվային պրոեկտորը զինված չէ տեխնիկական բնութագրով պահանջվող USB-տիպի մուտքային տերմինալով:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն նշել է, որ գնահատող հանձնաժողովը, www.armeps.am կայքի միջոցով 29.04.2014թ. հրապարակելով վերը նշված պարզաբանման հարցման պատասխանը, հաշվի է առել Ընկերության կողմից բարձրացված հարցերի մեծ մասը և պատրաստել է զգալիորեն վերափոխված «Տեխնիկական բնութագրերի պարզաբանում», սակայն նոր հրապարակված «Տեխնիկական բնութագրերի պարզաբանում» փաստաթղթում գնահատող հանձնաժողովը, ելնելով ժամանակակից ստանդարտների պահանջներից, անհրաժեշտ է գտել անփոփոխ թողնել Full HD (1.920 x 1,080 ընդամենը 2,304,000 pixels) 1080p. թույլտվության ազդանշանի արտացոլման և USB-տիպի մուտքային տերմինալի առկայության պահանջները գնման ենթակա թվային պրոեկտորի համար:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ 06.05.2014թ. www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գնային առաջարկում Ընկերությունը գնահատող հանձնաժողովին կրկին տեղեկացրել է, որ արտադրող Sony Corporation (Ճապոնիա) ընկերության հյուսիս-ամերիկյան և եվրոպական պաշտոնական WEB կայքերում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ SONY VPL-CX235 թվային պրոեկտորը կարող է արտացոլել միայն UXGA (1.600 x 1.200 pixels, ընդամենը 1.920.000 pixels) թույլտվության ազդանշան և ոչ թե պահանջվող Full HD (1.920 x 1,080 ընդամենը 2,304,000 pixels) 1080p. թույլտվության ազդանշան, ինչպես նաև SONY VPL-CX235 թվային պրոեկտորը զինված չէ պահանջվող USB-տիպի մուտքային տերմինալով: Ուստի SONY VPL-CX235 թվային պրոեկտորը չի համապատասխանում հրավերի մինիմալ տեխնիկական պահանջներին:

Ընկերությունը գնահատող հանձնաժողովին ներկայացրել է նաև հրավերով պահանջվող SONY VPL-CX235 և ընկերության կողմից առաջարկված NEC P 501X թվային պրոեկտորների տեխնիկական բնութագրերի համեմատական աղյուսակը և հայտնել, որ իր կողմից առաջարկված NEC P 501X թվային պրոեկտորը հիմնական տեխնիկական ցուցանիշներով (պայծառություն, մակսիմալ կետայնություն, կոնտրաստ, լամպի շահագործման ժամկետ և այլն) 20-ով ավել գերազանցում է թե պահանջվող մինիմալ, թե SONY VPL-CX235 թվային պրոեկտորի բնութագրերը:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ 08.05.2014թ., ուսումնասիրելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովից ստացված մասնակիցների գնային առաջարկների պատճենները, ընկերությունը էլեկտրոնային փոստով ուղարկված նամակով ևս մեկ անգամ հատուկ հրավիրվել է գնահատող հանձնաժողովի ուշադրությունն այն փաստին, որ "Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված SONY VPL-CX235 թվային պրոեկտորը չի համապատասխանում հրավերի մինիմալ տեխնիկական պահանջներին:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն տեղակացրել է, որ վերոհիշյալ փաստերը հատուկ արձանագրված են ինչպես ս.թ. ապրիլի 25-ի www.armeps.am կայքի միջոցով ընկերության կողմից ուղարկված պաշտոնական պարզաբանման հարցման մեջ, այնպես էլ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում, սակայն նամակը մնացել է անպատասխան:

ՀՀ կառավարության 05.05.2013թ. N 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգի 20-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն) ոչ ավտոմատ եղանակով տրամադրում է մասնակցիներին:

Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով, հայտերի բացման օրը գնահատող հանձնաժողովի կողմից որոշվում է ընտրված մասնակիցը, կազմվում է հայտերի բացման մասին արձանագրություն (հաշվետվություն) և հանձնաժողովի քարտուղարի կողմից ոչ ավտոմատ եղանակով տրամադրվում է ընթացակարգի մասնակիցներին:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի հայտերի բացման օր էր նշանակված ս.թ. մայիսի 7-ը, մինչդեռ վերը նշված արձանագրությունը (հաշվետվությունը) տրամադրվել է ընթացակարգի մասնակիցներին միայն ս.թ. հունիսի 3-ին:

Տվյալ հանգամանքն, ըստ Ընկերության, միանշանակ ստեղծում է բոլոր անհրաժեշտ իրավաբանական հիմքերը «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի գնահատող հանձնաժողովի ցանկացած որոշում անօրինական ճանաչելու համար, ինչի մասին Ընկերությունը 29.05.2014թ. էլեկտրոնային փոստով ուղարկված նամակով նախազգուշացվել է նաև «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գտնում է, որ պատվիրատուն ուղղակիորեն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները և պահանջել է չեղյալ հայտարարել՝ ՀՀ պաշտպանության նախարարության «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնահատող հանձնաժողովի 07.05.2014թ. N 3 արձանագրության 3.4 կետով՝ "Կոմպասս» ՍՊԸ-ի

կողմից առաջարկված SONY VPL-CX235 թվային պրոեկտորի տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսված տեխնիկական պայմաններին համապատասխանող ճանաչելու և 4.1 կետով «Կոմպասս» ՍՊԸ-ին ընթացակարգի ընտրված (հաղթող) մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Միևնույն ժամանակ Ընկերությունը նշել է, որ անհասկանալի պատճառներով նույն արձանագրությունը թվագրված է 07.05.2014թ., չնայած այն բանի, որ այդ փաստաթղթի 3.4 կետում նշվում է 30.05.14թ. ամսաթիվը:

2. ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 06.06.2014թ. N 04/032-1031 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 05.06.2014թ. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 17.06.2014թ. N ԴՎԱ/1573 գրությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի հայտերի բացման վերջնաժամկետ էր սահմանված 07.05.2014թ.: Սահմանված ժամկետում հայտ էին ներկայացրել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, «Մակսիմ» ՍՊԸ-ն, «Վելտ» ՍՊԸ-ն, «Կոմպասս» ՍՊԸ-ն և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն: Հայտերի բացման օրը բոլոր մասնակիցներին ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ուղարկվել է տեղեկատվություն՝ բացված հայտերի վերաբերյալ և նշում այն մասին, որ հայտերի վերաբերյալ մնացած տեղեկատվությունը կտրամադրվի հանձնաժողովի կողմից դրանք գնահատելուց հետո: Հայտերի բացման օրը «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի գրության հիման վրա, վերջինիս էլեկտրոնային եղանակով տրամադրվել է բոլոր մասնակիցների գնային առաջարկները:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի ուսումնասիրությունից պարզվել է, որ մասնակիցներից երեքի կողմից առաջարկվել են հրավերի տեխնիկական բնութագրից տարբերվող բնութագիր ունեցող ապրանքներ: Հանձնաժողովը որոշել է հայտերի գնահատումը

շարունակել համապատասխան մասնագետների կողմից ներկայացված առաջարկների համարժեքության մասին եզրակացության հիման վրա: Մասնագետների կողմից 30.05.2014թ. տրամադրվել է տեղեկատվություն, ըստ որի բոլոր մասնակիցների առաջարկները համարժեք են հրավերի տեխնիկական բնութագրին և հաղթող է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Կոմպասս» ՍՊԸ-ն: Հիմք ընդունելով էլեկտրոնային գնահատման տվյալները՝ 03.06.2014թ. հանձնաժողովը հաստատել է պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը, որն էլ արձանագրության հետ միասին ոչ ավտոմատ ծանուցմամբ ուղարկվել է բոլոր մասնակիցներին, այդ թվում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը գտնում է, որ «Կոմպասս» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու որոշումը չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, բացի այդ, ապրանքների տեխնիկական բնութագրերի համարժեքության որոշումը ընթացակարգի գնահատող հանձնաժողովի իրավասությունն է, իսկ այդ հարցի վերաբերյալ մասնակցի մեկնաբանությունները պարտադիր բնույթ չեն կրում:

3. ԳԲԽ-20/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-20/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն), ուսումնասիրելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 05.06.2014թ. ներկայացված բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով ընթացակարգին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2014թ. կայացած նիստի N 3 արձանագրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.06.2014թ. N ԴՎԱ/1573 գրությունը և դրան կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով

կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, հայտ են ներկայացրել նաև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն և «Կոմպասս» ՍՊԸ-ն:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգի Հրավերին կից տեխնիկական բնութագրով պահանջվել է տեսապրոեկտոր SONY VPL-CX235 3LCD BrightEra XGA Projector կամ համարժեք լրակազմ՝

- Պանել-Lan Control / LAN Display Micro Lens,
- Լամպ-300W,
- HDTV Compatibility 480i, 480p, 576i, 576p, 720p, 1080i, 1080p,
- Լուսավորություն 4000 ANSI Lumens ոչ պակաս,
- Լամպի երաշխիքային ժամկետը-3000ժ. (Eco), 2000ժ. (Normal),
- Կոնտրաստ-5300.1 ոչ պակաս,
- Կետայնությունը-786,432 (1024 X 768),
- Թույլատրվող համակարգ- NTSC, PAL, SECAM,
- 3 Դ պրոեկցիոն հեռավորությունը0.69-7.23 մ
- Պատկերի չափսը մինիմում-մակսիմում-30"-300" դույմ,
- Միացման տարբերակները (մուտք-ելք) - Analog RGB: D-sub 15 pin x 2, USB Type A x 1 HDMI v 1.3 x 1 S-video: mini din 4 pin x 1 Composite video: RCA x 1 microphone: stereo mini jack x 1 Audio L/R: RCA x 2 stereo mini jack x 1, ներդրված բարձրախոսներ 2 x 10 վտ,
- Ուժեղացուցիչի խորհուրդ տրվող հզորությամբ-10-80w,
- Հաճախականության դիապազոնը-AC 100 - 200 V, 50 - 60 Hz,
- Զգայություն-88db 2.8 V, 1 meter,
- Նոմինալ դիմադրությունը 8 ohms,
- Աուդիո-վիդեո մուտք ելք-compozit video 4 մուտք, S-Video 1 մուտք, Stereo Audio 7 մուտք, Phono 1 մուտք, subwoofer ելք 2 հատ, compozit video ելք 2 հատ, ականջակալի ելք 1 հատ, PreAmp ելք 1 հատ,
- VGA Ստանդարտի մալուխ,
- VGA ստանդարտի մալուխ նախատեսված տեսապրոեկտորը համակարգչին միացնելու համար, 10 մետր երկարությամբ,

- Բարձրախոսը միացնելու համար նախատեսված մալուխ, ցածր դիմադրությամբ, կտրվածքի տրամագիծը 2 մմ, երկարությունը 10 մ:
- Ամրացվող հենակով Draper Rolleramic Motorized կամ համարժեք էլեկտրական պրոեկցոն էկրան 120x90", հեռակառավարման վահանակով, պրոեկտորի պահպանիչ կեյս,
- կախիչ 65 սմ, շարժական-կարգավորվող,
- Երաշխիքային սպասարկում 1 տարի, խոտանները վերացվում են տեղակայման վայրում՝ մատակարարի ուժերով:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 05.06.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ 23.04.2014թ. www.armeps.am համացանցային կայքի միջոցով հրապարակվել է գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի 2014թ. ապրիլի 23-ի որոշմամբ հաստատված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով հրավերը (ծանուցումը): Ընկերությունն ուսումնասիրելով տրամադրված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով հրավերը (ծանուցումը), ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, 25.04.2014թ. www.armeps.am համացանցային կայքի միջոցով դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ հրավերով պահանջվող SONY VPL-CX235 թվային պրոեկտորին ներկայացված տեխնիկական բնութագրերի մեծ մասը չի համապատասխանում SONY VPL-CX235 թվային պրոեկտորի բնութագրին՝ մասնավորապես SONY VPL-CX235 թվային պրոեկտորը կարող է արտացոլել միայն UXGA (1.600 x 1.200 pixels, ընդամենը 1.920.000 pixels) թույլտվության ազդանշան և ոչ թե պահանջվող Full HD (1.920 x 1,080 ընդամենը 2,304,000 pixels) 1080p. թույլտվության ազդանշան, ինչպես նաև SONY VPL-CX235 թվային պրոեկտորը զինված չէ պահանջվող USB-տիպի մուտքային տերմինալով՝ խնդրելով նշվածի վերաբերյալ տալ պաշտոնական պարզաբանում:

Գնահատող հանձնաժողովը www.armeps.am կայքի միջոցով 29.04.2014թ. հրապարակել է պարզաբանման (հարցման) պատասխանը նոր հրապարակված «Տեխնիկական բնութագրերի պարզաբանում» փաստաթղթում, որտեղ Պատվիրատուի կողմից հանվել է գնման ենթակա ապրանքի անվանումը և «կամ համարժեք» արտահայտությունն, իսկ գնման առարկայի տեխնիկական բնութագիրն ամբողջովին թողնվել է անփոփոխ:

«Կոմպասս» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 06.05.2014թ. ներկայացված գնային առաջարկով առաջարկել է տեսապրոեկտոր SONY VPL-CX235 3LCD BrightEra XGA Projector լրակազմ՝ նշելով հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«VGA ստանդարտի մալուխ, VGA ստանդարտի մալուխ նախատեսված տեսապրոեկտորը համակարգչին միացնելու համար, 10 մետր երկարությամբ: Բարձրախոսը միացնելու համար նախատեսված մալուխ, ցածր դիմադրությամբ, կտրվածքի տրամագիծը 2 մմ, երկարությունը 10 մմ: Ամրացվող հենակով էլեկտրական պրոյեկցոն էկրան 300 x 225 սմ, հեռակառավարման վահանակով, պրոեկտորի պահպանիչ կեյս, կախիչ 60-100 սմ, շարժական-կարգավորվող: Երաշխիքային սպասարկում 1 տարի, խոտանները վերացվում են տեղակայման վայրում՝ մատակարարի ուժերով»:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված SONY VPL-CX235 թվային պրոեկտորը չի համապատասխանում հրավերի մինիմալ տեխնիկական պահանջներին և որպես ապացույց ներկայացրել է արտադրողի՝ Sony Corporation (Ճապոնիա) ընկերության հյուսիս-ամերիկյան և եվրոպական պաշտոնական համացանցային կայքերում հրապարակված տեղեկատվությանը, որի համաձայն հրավերով պահանջվող թվային պրոեկտորի ներկայացված տեխնիկական բնութագրերի մեծ մասը չի համապատասխանում SONY VPL-CX235 թվային պրոեկտորի բնութագրերին, մասնավորապես՝ SONY VPL-CX235 թվային պրոեկտորը կարող է արտացոլել միայն UXGA (1.600 x 1.200 pixels, ընդամենը 1.920.000 pixels) թույլտվության ազդանշան և ոչ թե պահանջվող Full HD (1.920 x 1,080 ընդամենը 2,304,000 pixels) 1080p. թույլտվության ազդանշան, ինչպես նաև SONY VPL-CX235 թվային պրոեկտորը զինված չէ պահանջվող USB-տիպի մուտքային տերմինալով:

Կենտրոնում՝ 2014 թվականի հունիսի 23-ին, ժամը 11:00-ին կազմակերպված բանավոր լսումների ժամանակ, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացուցիչն ամբողջությամբ պնդեց իր կողմից ներկայացված բողոքը:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ գնման ենթակա պրոեկտորը պետք է օգտագործվի նաև դաշտային պայմաններում և հրավերի տեխնիկական բնութագրով պրոյեկտորի՝ USB-տիպի մուտքային տերմինալ ունենալու պահանջը հենց պայմանավորված է այդ հանգամանքով:

Հանձնաժողովի այն հարցին, թե արդյոք «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից առաջարկված SONY VPL-CX235 թվային պրոեկտորը համապատասխանում է հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին, այսինքն, նշված մոդելը արտացոլում է պահանջվող Full HD (1.920 x 1,080 ընդամենը 2,304,000 pixels) 1080p. թույլտվության ազդանշան, ինչպես նաև զինված է պահանջվող USB-տիպի մուտքային տերմինալով, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ չի կարող պատասխանել նշված հարցադրմանը:

Բացի այդ, Պատվիրատուն չներկայացրեց որևէ ապացույց այն մասին, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված SONY VPL-CX235 թվային պրոեկտորն ունի հրավերով պահանջվող «Full HD թույլտվության ազդանշան» և «USB-տիպի մուտքային տերմինալ» հատկանիշները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսինքն, Պատվիրատուն «Կոմպասս» ՍՊԸ-ին որպես Ընթացակարգի հաղթող (ընտրված մասնակից) ճանաչելով, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, քանի որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկով ներկայացված SONY VPL-CX235 թվային պրոեկտորը չունի Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող «Full HD թույլտվության ազդանշան» և «USB-տիպի մուտքային տերմինալ» հատկանիշներն, ինչը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Գտնում ենք, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը՝ առաջարկում ենք «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 05.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի N 3 արձանագրությամբ՝ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից առաջարկված SONY VPL-CX235 թվային պրոյեկտորի տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսված տեխնիկական պայմաններին համապատասխանող ճանաչելու և «Կոմպասս» ՍՊԸ-ին ընթացակարգի հաղթող (ընտրված մասնակից) մասնակից ճանաչելու մասին որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Է. Սարգսյան

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-20/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Ռ. Մկրտչյան